# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N6

## ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք. Սևան 10.01.2018թ.

ժամը 11:30

**Հանձնաժողովի նախագահ՝** Մարի Սիմոնյան

**Անդամներ՝** Խաչիկ Կիրակոսյան

Ռոմելա Հարությունյան

Մարիաննա Առաքելյան

**Գնումները համակարգող՝** Լանա Դավթյան

Նիստին մասնակցում է <<Պանտեռա Սիքյուրիթի>> ՍՊԸ-ի կողմից լիազորված անձ Արթուր Արագածի Ավդալյանը:

***<u>ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին</u>***
(Մ. Սիմոնյան)

1. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին:
2. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

### 1. <u>Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին</u>
(Մ. Սիմոնյան)

1.1 Քանի որ 1-ին չափաբաժնի համար ներկայացված գնային առաջարկները գերազանցում էին սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գնման հայտով սահմանված գինը, գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011թ.-ի փետրվարի 10-ի N168-Ն որոշումն ուժը

կորցրած ճանաչելու մասին>> ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 40-րդ կետի 5-րդ ենթակետով , 29.12.2017թ.-ին որոշում էր կայացրել վերը նշված չափաբաժնի համար 1-ին և հաջորդաբար տեղեր գրաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը և առաջարկված գնի նվազեցման նպատակով <<ԱՐ-ՄՈԲԻԼ>> ՓԲԸ-ի և <<Պանտեռա Սիքյուրիթի>> ՍՊԸ-ի հետ միաժամանակյա բանակցություններ վարելու համար հրավիրել էր նիստ 2018 թվականի հունվարի 10-ին ժամը 11:30-ին ք. Սևան Կարմիր Բանակի 68 հասցեում, ֆինանսական բաժնի վարչական շենքում: Բանակցությունների վարման համար սահմանվել էր ժամանակ ՝ 10 րոպե:

1.2 Մասնակիցներին էլեկտրոնային ձևով ծանուցվել էր գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

1.3 Սահմանված ժամկետում և կարգով <<ԱՐ-ՄՈԲԻԼ>> ՓԲԸ-ի և <<Պանտեռա Սիքյուրիթի>> ՍՊԸ-ի կողմից նոր գնային առաջարկ չի ներկայացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011թ.-ի փետրվարի 10-ի N168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 40-րդ կետի 5-րդ ենթակետի <<գ>> պարբերությունով հանձնաժողովը որոշեց սույն գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Սիմոնյան

Անդամներ՝ Խ. Կիրակոսյան

Ռ. Հարությունյան

Մ. Առաքելյան

Գնումների համակարգող՝ Լ. Դավթյան